«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր
Մ.Բաբայան

«02» 03 2021 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի 2020 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինը կազմակերպել և ապահովել է հետևյալ միջազգային միջոցառումների իրականացումը.

1. Ներքոհիշյալ 3 գործուղմանը Կրթահամալիրի 10 ծառայողի մասնակցությունը. (Ն/Ժ 2019թ. - թվով 5 գործուղում, որին մասնակցել է 10 ծառայող):

- Հունվարի 25-ից փետրվարի 9-ը ԱՄՆ Կանզաս նահանգում Պարեկային ծառայության կազմակերպման ամերիկյան մոդելի առանձնահատկությունների ուսումնասիրություն – 6 ծառայող,
- Փետրվարի 19-ից 21-ը Բելառուսի ՆԳՆ ակադեմիայում կայացած «Հանցավորության դեմ պայքարի և իրավապահ համակարգում կադրերի վերապատրաստման հիմնախնդիրները» թեմայով գիտագործնական համաժողովին և համագործակցության արձանագրության ստորագրմանը – 2 ծառայող,
- Մարտի 3-ից 6-ը Վրաստանում կայացած Կին ոստիկանների համաժողովին – 2 ծառայող:

2. Կազմակերպվել է հետևյալ պատվիրակությունների 4 այց Կրթահամալիր (Ն/Ժ 2019թ.՝ 3 ճանաչողական այց):

- Եվրամիության խորհրդատվական առաքելության պատվիրակություն,
- Մոլդովայի Հանրապետության ՆԳՆ «Շտեֆան չէլ Մարե» ակադեմիայի պատվիրակություն,
- Իտալիայի դեսպանության և Իտալիայի ֆինանսական ոստիկանության բրիգադի ներկայացուցիչներ:
- Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան տարածաշրջանային անվտանգության ծառայության պատվիրակություն:

3. Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրակականացվել են նաև հետևյալ աշխատանքները.

- Կրթահամալիրի 6 ծառայող և 1 սովորող մասնակցել է գործընկեր բուհերի կողմից կազմակերպված հեռավար և առցանց 6 միջոցառման:

“ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ” ՊՈԱԿ
Մուտք Թիվ 4/Ա-97
« 02 » 03 20 21

- Համատեղ միջոցառումների անցկացման վերաբերյալ աշխատանքային նպատակային պլաններ են ստորագրվել ՌԴ ՆԳՆ Ռոստովի իրավաբանական ինստիտուտի, Վ.Յա. Կիկոտի անվան Մոսկվայի համալսարանի և Սանկտ Պետերբուրգի համալսարանի հետ:
- Համագործակցության արձանագրություն է ստորագրվել Բելառուսի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի և Ուկրաինայի Ներքին գործերի ազգային ակադեմիայի հետ:
- Ապահովվել է «edupolice.am» կայքէջում գիտական, մշակութային և այլ բնույթի 91 միջոցառման լուսաբանում՝ անգլերեն և ռուսերեն թարգմանությամբ (Ն/Ժ 2019թ.՝ 221 նորություն):
- Պատշաճ կերպով պատասխաններ են ուղարկվել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ էլեկտրոնային փոստով ստացված թվով 641 տեղեկատվական հարցման (Ն/Ժ 2019թ.՝ 150):
- Կրթահամալիրի պետի 22.02.2019թ. թիվ 93-Ա հրամանի պահանջներով «www.edupolice.am» կայքէջում համալրվել և թարմացվել են ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկությունները:
- Բաժնի կողմից աշխատանքներ են իրականացվել հանրության շրջանում Կրթահամալիրի վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ facebook և youtube սոցիալական ցանցերում վարելով Կրթահամալիրի էջը:
- ՀՀ ոստիկանությունում նոր Պարեկային ծառայության ստեղծման ուղղությամբ պարեկային ոստիկանների պատրաստման ուսումնական առարկաների և ծրագրերի վերաբերյալ հարցումներ են արվել և պատասխաններ ստացել Վրաստանի ՆԳՆ ակադեմիայից:
- Հավաքագրվել և վերլուծվել են նոր Պարեկային ծառայության ստեղծման շրջանակներում ուսուցումն անցկացնող դասընթացավարների ընտրության համար Կրթահամալիրի կայքէջին ստացված հայտերը:
- Բաժնի աշխատակիցները մասնակցել են Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալություն (ՍԻՊՈԼ) նոր կայքէջի գործարկման և կանոնակարգման նպատակով առցանց անցկացրած 9 հանդիպման:
- Իրականացվել են Կրթահամալիրում առցանց դասընթացների վերահսկման աշխատանքներ:
- Տեխնիկական առարկաների ամբիոնի հետ համատեղ արդիականացվել է քոլեջի մեկ համակարգչային լսարան:
- Իրականացվել է Կրթահամլաիրում շահագործվող համակարգչային տեխնիկայի հաշվառում:
- Վերազինվել, արդիականացվել և շահագործման են հանձնվել 7 համակարգիչներ:
- Իրականացվել են Կրաթահամալիրում գործող համակարգչային ցանցի նորոգման և սպասարկման աշխատանքներ:

Բաժնի կողմից աշխատանքներ են իրականացվել նաև Կրթահամալիրի 2017-2021 թվականների ռազմավարական պլանով նախատեսված քայլի իրագործման ուղղությամբ

1. ՌՊ 1.1.10 և 1.2.4 - թարմացվել է edupolice.am կայքէջի «Որակի ապահովման գործընթաց» բաժնի տեղեկատվությունը: Կայքէջը ինտերնետ տիրույթում ունեցել է 280205 այցելություն:
2. ՌՊ 1.4.1 - արդյունավետ կիրառվել են Facebook և այլ սոցիալական հարթակները, ինչպես նաև ZOOM առցանց դասավանդման հարթակը:
3. ՌՊ 3.2.2 - Կրթահամալիրը համագործակցության արձանագրություն է կնքել Բելառուսի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի և Ուկրաինայի Ներքին գործերի ազգային ակադեմիայի հետ որոնցով նախատեսված են գիտահետազոտական աշխատանքների իրականացման հնարավորություններ: Միևնույն ժամանակ, ՌԴ ՆԳՆ Ռոստովի իրավաբանական ինսիտուտի հետ հաստատվել է աշխատանքային ծրագիր՝ «Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի հակազդման հիմնախնդիրները. համեմատական, իրավական վերլուծություն» թեմայով համատեղ հետազոտություն իրականացնելու նպատակով:
4. ՌՊ 4.1.1 - ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «edupolice.am» կայքէջում իրականացվել է գիտական, մշակութային և այլ բնույթի 91 միջոցառման լուսաբանում՝ անգլերեն և ռուսերեն թարգմանությամբ: Facebook սոցիալական ցանցում 1962-ով ավելացել են Կրթահամալիրի էջի հետևորդները (ընդամենը 6501):
5. ՌՊ 4.1.2 - ՀՀ ոստիկանության նոր Պարեկային ծառայության շրջանակներում Կրթահամալիրի կայքէջում և Facebook սոցիալական ցանցում հրապարակվել են տեղեկատվական-գովազդային հայտարարություններ, ինչպես նաև ֆոտոնյութեր դիմորդների մասնակցությամբ:
6. ՌՊ 5.1.1 - Միջազգային համագործակցությունն ընդլայնելու նպատակով Կրթահամալիրը համագործակցության արձանագրություն է կնքել Բելառուսի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի և Ուկրաինայի Ներքին գործերի ազգային ակադեմիայի հետ:
7. ՌՊ 5.1.3 - Հաշվետու ժամանակահատվածում Կրթահամալիրի 10 ծառայող մասնակցել է ԱՄՆ-ում, Բելառուսի Հանրապետությունեում և Վրաստանում իրականացված գիտագործնական համաժողովներին և վերապատրաստման դասընթացներին: Մագիստրատուրայի 1 սովորող համավարակի պատճառով չի մեկնել ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիա և համաժողովին մասնակցել է առցանց եղանակով:
8. ՌՊ 5.1.5 - Միջազգային համագործակցության և SS ներդրման բաժինն աշխատանքներն իրականացրել է պատշաճ կերպով, ուսումնական ստորաբաժանումների և գիտական բաժնի միջոցով իրազեկելու Կրթահամալիրի անձնակազմին և սովորողներին արտասահմանյան գիտական հանդեսներում տպագրվելու և միջազգային այլ միջոցառումներին մասնակցելու հնարավորությունների վերաբերյալ: Մագիստրատուրայի մեկ սովորող մասնակցել է ՌԴ ՆԳՆ Օմսկի ակադեմիայի կազմակերպած առցանց համաժողովին:

9. ՌՊ 5.2.3 Կրթամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի հեղինակած 8 նյութ տպագրվել է արտասահմանյան հանդեսներում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիր-ժամանակացույցով իրականացված աշխատանքներ

6.4.4. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ հնարավորություն ստեղծել հետազոտությունների արդյունքները հրատարակելու համար:

Կրթահամալիրը համագործակցության արձանագրություն է կնքել Բելառուսի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայի և Ուկրաինայի Ներքին գործերի ազգային ակադեմիայի հետ, որոնցով նախատեսված են գիտահետազոտական աշխատանքների իրականացման հնարավորություններ: Միևնույն ժամանակ, ՌԴ ՆԳՆ Ռոստովի իրավաբանական ինսիտուտի հետ հաստատվել է աշխատանքային ծրագիր՝ «Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի հակազդման հիմնախնդիրները. համեմատական, իրավական վերլուծություն» թեմայով համատեղ հետազոտություն իրականացնելու նպատակով:

8.2.2. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ կայքէջի միջոցով ապահովել բոլոր տիրույթներում Կրթահամալիրի գործունեության թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Թարմացվել է edupolice.am կայքէջի «Որակի ապահովման գործընթաց» բաժնի տեղեկատվությունը: Կայքէջն ինտերնետ տիրույթում ունեցել է 280205 այցելություն: Արդյունավետ կիրառվել են Facebook և այլ սոցիալական հարթակները, ինչպես նաև ZOOM առցանց դասավանդման հարթակը:

8.2.3. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ կայքէջում ավելացնել անգլերեն և ռուսերեն լեզուներով տեղեկատվությունը:

Կայքէջում մշտապես լուսաբանվում է Կրթահամալիրի ուսանողական և հասարակական ակտիվությունը, ինչպես նաև անմիջապես թարմացվում է սպորտաբաժանումների կողմից իրենց վերաբերող մասով տրված տեղեկատվությունը (առարկայական նկարագրեր, հաշվետվություններ, իրավական ակտեր և այլն) 2020թ ընթացքում՝ մինչ օրս լուսաբանվել է 91 իրադարձություն: 2020թ ընթացքում՝ մինչ օրս ապահովվել է 101 նորության և այլ փաստաթղթերի թարգմանությունն անգլերեն և ռուսերեն լեզուներով:

8.3.2 Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ իրականացնել Կրթահամալիրի կայքէջի և ֆեյսբուքյան պաշտոնական էջին ուղղված հարցերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Իրականացվել է Կրթահամալիրի կայքէջի և ֆեյսբուքյան պաշտոնական էջին ուղղված հարցերի ուսումնասիրություն և վերլուծություն: 2020թ ընթացքում՝ մինչ օրս կայքէջի և էլ. փոստի միջոցով ստացվել է 641, ֆեյսբուքյան էջի 382 հարցում, որոնց

տրվել է սպառիչ պատասխան: Իրականացված վերլուծության արդյունքում պարզվել է, որ հարցումների 99% վերաբերել է ընդունելության կարգին՝ այդ թվում Նոր պարեկային ծառայության պայմաններին: Կրթահամալիր ստորաբաժանումներին հարցում է արվել edupolice.am կայքէջի վերաբերյալէ համաձայն որոնց միջին գնահատականը կազմել է 8.2 /10 միավորանոց սանդղակով/: Հարցման արդյունքում ներկայացված առաջարկությունների մի մասը իրականացվել է:

9.2.1. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի մշտական անձնակազմի և սովորողների արտասահմանյան գործուղումների և շարժունության կազմակերպման» կանոնակարգ նախագծի մշակում:

Սահմանված քայլի իրագործման նպատակով՝ մշակվել է «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայողների և սովորողների արտասահմանյան գործուղումների կազմակերպման» կարգը և ուղարկվել է Կրթահամալիրի ստորաբաժանումներին՝ առաջարկություններ ներկայացնելու նպատակով: ***Կարգը մինչ օրս չի ընդունվել:***

9.2.2 Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ գործուղումների վերաբերյալ առավել մանրամասն հաշվետվությունների ներկայացման ձևաչափի մշակում և ներդնում:

Սահմանված քայլի իրագործման նպատակով «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայողների և սովորողների արտասահմանյան գործուղումների կազմակերպման» կարգի 6.2 կետով սահմանվում է, որ արտասահմանյան գործուղումից վերադառնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում Կրթահամալիրի միջազգային համագործակցության և SS ներդրման բաժին պետք է ներկայացվի տեղեկատվություն՝ արտասահմանյան գործուղման արդյունքներով ի հայտ եկած դրական փորձը մասնագիտական կրթական ծրագրերում ներառելու վերաբերյալ:

9.3.1. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ արտաքին կապերի և միջազգայնացման 2017-2021թթ ռազմավարական ծրագիր համապատասխանեցնել Կրթահամալիրի 2017-2021թթ ռազմավարական պլանին:

Միջազգային բաժնի առաջարկով, Գիտական խորհրդի որոշմամբ, Կրթահամալիրի 2017-2021թթ. Ռազմավարական պլանից հանվել են՝ ամառային դպրոց կազմակերպելու (5.1.4) և ֆակուլտետներին միջազգային համագործակցության ծրագրերում ներգրավելու (5.1.2) քայլերը, որոնք հանդիսանում էին անհամապատասխանությունների պատճառ:

9.4.1. Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ օտարերկրյա դիմորդների ներգրավման աշխատանքների խթանում՝ կայքէջում Կրթահամալիրի գործունեության վերաբերյալ օտար լեզվով տեղեկատվության ապահովմամբ:

2020թ ընթացքում՝ ապահովվել է 101 նորության և այլ փաստաթղթերի թարգմանություն անգլերեն և ռուսերեն լեզուներով:

9.6.1 Նախատեսվող միջանկյալ արդյունքն է՝ վերանայել Միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի գործառույթները:

Միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի գործառույթային պարտականությունները վերանայվել և հստակեցվել են Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետի կողմից նպատակաուղղելով միջազգային համագործակցության ազդեցությունը Կրթահամալիրի ՄԿԾ-ների և այլ գործընթացների բարելավմանը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական
և զարգացման վարչության միջազգային համագործակցության
և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի պետ,
ոստիկանության փոխգնդապետ Գ.Դավթյան

«01»_____03_____2021թ.